«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2015 թվականի

Ուսանողական խորհրդի հաշվետվությունն ուսանողների ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական, հայրենասիրական դաստիարակության աշխատանքների մասին

Լսելով և քննարկելով **«Ուսանողական խորհրդի հաշվետվությունն ուսանողների ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական, հայրենասիրական դաստիարակության աշխատանքների մասին»** հարցը (զեկուցող՝ ուսանողական խորհրդի նախագահ Ս.Ա.Խառատյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. 2015 թվականին ուսանողական խորհուրդը շարունակել է աշխատանքները՝ հավատարիմ մնալով իր սկզբունքներին: Ինչպես գործունեության ողջ ընթացքում, այնպես էլ այս տարի ուսանողական խորհրդի գերխնդիրը եղել է ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանությունը:

Անցնող տարում ուսանողական խորհուրդն արձանագրել է բազում ձեռքբերումներ ու հաջողություններ: 2015 թվականին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կազմակերպած «Հայկյան» մրցանակաբաշխությանը, որին ներկա է եղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողական խորհուրդը չորրորդ տարին անընդմեջ հաղթող է ճանաչվել «Լավագույն ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգում և արժանացել «Հայկյան» մրցանակի:

Ուսանողների քաղաքացիական-հայրենասիրական և իրավական դաստիարակությունն իրականացվել է հետևյալ ուղղություններով՝ մասնակցություն հայրենասիրական ծրագրերին ու միջոցառումներին, այցելություններ Հայաստանի պատմամշակութային վայրեր և թանգարաններ, ամենամյա հանդիպումներ ՀՀ պաշտպանության նախարարի հետ, ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցների հետ պարբերաբար այցելություններ տարբեր զորամասեր, սահմանային գոտիներ, երիտասարդության իրավական գրագիտության զարգացում և ընտրական ակտիվության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

Ուսանողական խորհուրդն ակտիվ մասնակցություն է ունեցել Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներին, որի շրջանակներում 250 ուսանող ներկա է գտնվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կայացած Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի սրբադասման արարողությանը, իսկ ապրիլի 24-ին ուսանողները մասնակցել են ամենամյա ջահերով երթին: «Նժդեհ» ռազմահայրենասիրական ակումբի նախաձեռնությամբ անցկացվել է «1.500.000 + 1» խորագրով բաց դաս՝ նվիրված Հրանտ Դինքին: Համալսարանի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ հրատարակվել է «Հատուցման գինը» (հեղինակ՝ համալսարանի ասպիրանտ Հայկ Բեջանյան) գիրքը: Գիրքը պատմատնտեսագիտական վերլուծություն է՝ նվիրված Հայոց ցեղասպանության ընթացքում հայ ժողովրդի կրած

նյութական կորուստներին: Ֆինանսական ֆակուլտետում ապրիլի 22-ին տեղի է ունեցել Անդրանիկ Օզանյանի անունը կրող լսարանի բացումը:

Նպատակ ունենալով բարձրացնել ու կատարելագործել ուսանողների մասնագիտական կարողությունները՝ ուսանողական խորհուրդը նախաձեռնել և իրականացրել է բազմապիսի կրթական և ուսումնագիտական ծրագրեր: Ապրիլի 17-19-ը համալսարանի ուսանողական խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի նախաձեռնությամբ Ծաղկաձորում անցկացվել է «Հայաստանի Հանրապետության տնտեսական համակարգը. նորարարություն, զարգացում, իրագործում» խորագրով «InHead» միջբուհական ուսանողական գիտաժողովը: Գիտաժողովի երկրորդ օրը նիստին մասնակցել է ՀՀ վարչապետ, ՀՊՏՀ խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանը:

Օգոստոսի 22-ին Ծաղկաձորում կայացել է «Բազե-2015» համահայկական երիտասարդական հավաքի փակման գալա-համերգը, որին ներկա է եղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Հաղթող ճակատ է ճանաչվել կապույտը, որը և ներկայացնում էր ՀՊՏՀ ջոկատը:

ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին ընդառաջ՝ սեպտեմբերի 19-ին համալսարանում հյուրընկալվել և ռազմահայրենասիրական թեմաների շուրջ ուսանողների հետ զրուցել է ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ, ՀՀ պաշտպանության նախարարության, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ համալսարանում բացվել է հրաձգարան:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու տարում, ուսանողական խորհուրդը մասնակցել է Երեբունի-Երևան տոնակատարությանը:

Երիտասարդության ընտրական ակտիվության մեծացման հետ կապված՝ համալսարանում հատուկ ուշադրություն է դարձվում ուսանողների իրավական դաստիարակությանը: Անցկացվել են ուսանողական ակտիվի հանդիպումներ իշխանության ներկայացուցիչների հետ, խորհրդակցություններ՝ նվիրված ընտրական իրավունքին, ընտրական պատասխանատվությանը և այլ հարցերի:

Հոկտեմբերին կայացել է «Smart» խորագիրը կրող միջբուհական-ուսանողական աշխատաժողովը, որը կազմակերպել էր ուսանողական խորհուրդը Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հետ համատեղ:

Ունեցած գիտելիքների շրջանակը մեծացնելու և նոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով ողջ տարվա ընթացքում կազմակերպվել են բաց դասեր, որի շրջանակներում բուհում հյուրընկալվել և գործնական բանախոսություններով են հանդես եկել «Իմեքս Գրուպ» ՍՊԸ, «Իդեալ համակարգի», «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ, «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ, «Բիլայն Արմենիա» ՓԲԸ և հանրապետության այլ առաջատար ընկերությունների ներկայացուցիչներ:

Տարվա ընթացքում կազմակերպվել են բազմապիսի ռազմահայրենասիրական միջոցառումներ: Հունվարին սահմանին տիրող լարված իավիճակի պայմաններում, ուսանողներն այցելել են Հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկը և այնտեղ նշել «Հայոց բանակի օրը»: Ապրիլի 13-ին ուսանողական խորհրդի և «Բաղրամյան» զորավարժարանի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, իսկ մայիսին կազմակերպվել է 3-օրյա բանակում-ճամբար ազատագրված Քարվաճառում:

Անցնող տարվա ընթացքում ամրապնդվել են կապերը նաև արտերկրի ուսանողական կազմակերպությունների հետ: Լինելով Ուսանողական ազգային ասոցիացիայի հիմնադիր անդամ՝ ՀՊՏՀ ուսանողական խորհուրդը անդամակցում է ուսանողական մի շարք ծրագրերի: Դրանց շրջանակներում նախորդ տարի համալսարանի 10-ից ավելի ուսանողներ եղել են եվրոպական տարբեր երկրներում, ծանոթացել կրթության կազմակերպման սկզբունքներին, ուսանողական ինքնակառավարման և կրթական պրոցեսի բարելավմանն ուղղված քայլերին, ինչպես նաև մասնակցել միջազգային գիտաժողովների և ներկայացրել զեկուցումներ:

Մարտին տեղի է ունեցել բանավեճ-քննարկում ուսանողների և ռեկտորատի ներկայացուցիչների միջև: Ուսանողները ներկայացրել են ուսանողների շրջանում անցկացված սոցիալական հարցման արդյունքները՝ առաջարկելով իրենց նախագծած լուծումները:

Ուսխորհրդականները կանոնավոր կերպով այցելել են սոցիալական տարբեր հաստատություններ՝ մանկատներ, ծերանոցներ: Ուսանողական խորհրդի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվել սոցիալապես խոցելի ուսանողներին ցուցաբերվող աջակցությունը: Հաշվետու տարում ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ և միջնորդությամբ շուրջ 150 ուսանողներ արժանացել են Հայաստանի երիտասարդական հիմնադրամի, Հայ օգնության ֆոնդի և այլ հիմնադրամների կրթաթոշակների: Ուսանողական խորհուրդը ՀԵՀ-ի հետ համատեղ կազմակերպել է նաև սահմանապահ համայնքների ուսանողների ուսման վարձի փոխհատուցման ծրագրի իրականացումը:

Ողջ տարվա ընթացքում ուսխորհրդականները պարբերաբար եղել են նաև «Տնտեսագետ» ուսանողի տանը, եղել այնտեղի բնակիչների կողքին և սատար կանգնել զանազան խնդիրների լուծման հարցում:

Կարևոր տեղ են զբաղեցնում նաև մարզական և մշակութային միջոցառումները: Առողջ ապրելակերպի քարոզման և ուսանողական կյանքը առավել հետաքրքիր դարձնելու նպատակով արդեն ավանդույթ է դարձել «Ուսանողական ամառ», «Ուսանողական աշուն» և «Ուսանողական գարուն» մարզամշակութային փառատոնների անցկացումը: Կազմակերպվում են մրցույթներ բոլոր մարզաձևերից: Կարևոր ձեռքբերումներից էր նաև հոկտեմբերին կազմակերպված Եվրոպայի շախմատի ուսանողական առաջնությունը, որի հիմնական կազմակերպիչներից մեկն էլ ՀՊՏՀ ուսանողական խորհուրդն էր:

Այս տարի յուրօրինակ ձևով է կազմակերպվել «Ուսանողական ամառ-2015» մարզամշակութային փառատոնը, որն անցկացվել է Դիլիջանի մարզաառողջարանում: ՀՊՏՀ 6 ֆակուլտետները և Եղեգնաձորի մասնաճյուղը ներկայացնող ջոկատներից յուրաքանչյուրը կրում էր ՀՀ ազգային հերոսներից մեկի անունը: 7 օր շարունակ ջոկատները պայքարել են լավագույնի տիտղոսի համար՝ յուրօրինակ ձևով համատեղելով առողջ ապրելակերպը, ուսանողական հանգիստն ու անմոռանալի հիշողությունները: Փառատոնի վերջին օրը ճամբարականներին հյուրընկալվել են ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը, ՀԵՀ հոգաբարձուների խորհրդի համակարգող Կարեն Ավագյանը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը և այլ պաշտոնատար հյուրեր:

Ուսանողական խորհուրդը ուշադրություն է դարձնում նաև ուսանողների ազատ ժամանցի կազմակերպմանն ու անցկացմանը: Կազմակերպվում են բազմաբնույթ

կինոդիտումներ, մշակութային երեկոներ, տոնական համերգներ ու ծրագրեր: Ավանդաբար անցկացվում են զանգվածային միջոցառումներ՝ «ՀՊՏՀ շրջանավարտի օր», «Գիտելիքի օր», «Առաջին կուրսեցու օր»: Ուսանողների համախմբմանը, ուսանողական մշակույթի ձևավորմանը նպաստում է համատեղ հանգստի կազմակերպումը. ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ այս տարի ուսանողներն իրենց ձմեռային արձակուրդի մի մասն անցկացրել են Ծաղկաձորում, իսկ ամառային հանգիստը՝ Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում:

Ելնելով վերոնշյալից՝ համալսարանի գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Ուսանողական խորհրդի կատարած աշխատանքը գնահատել բավարար:**

2. **Առաջարկել ուսանողական խորհրդին՝**

   1) սերտորեն համագործակցել ռեկտորատի, դեկանատների և ամբիոնների հետ ուսումնագիտական և ուսումնադաստիարակչական աշխատանքներում.
   2) ուսանողության շրջանում պարբերաբար անցկացնել սոցիոլոգիական հարցումներ և արդյունքները ներկայացնել ռեկտորատի քննարկմանը.
   3) ավելի մեծ ուշադրություն դարձնել սոցիալապես խոցելի խմբերի ուսանողներին ցուցաբերվող աջակցությանը.
   4) ձեռնարկել միջոցառումներ ուսանողների կարգապահության ամրապնդման ուղղությամբ.
   5) առավել ակտիվորեն կազմակերպել դաստիարակչական, ազգային, հայրենասիրական բնույթի միջոցառումները.
   6) առանձնահատուկ ուշադրություն դարձնել առաջին կուրսեցիների հետ կատարվող աշխատանքներին.
   7) ակտիվորեն համագործակցել Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի ուսանողական խորհուրդների հետ.
   8) ակտիվացնել համագործակցությունը արտերկրի համանման երիտասարդական կազմակերպությունների հետ.
   9) համագործակցել համալսարանի հենակետային ավագ դպրոցների հետ:

3. **Սույն որոշման կատարման նկատմամբ պատասխանատվությունը վերապահել ուսանողական խորհրդի նախագահ Ս.Ա.Խառատյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

14.12.2015 թ.